

ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՖԱԲՐԻԿԱՆԵՐՈՒՄ, ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՑՆԵՐՈՒՄ

Արտադրության Էկոնոմիկա և կազմակերպութ

ԺՈՂՏՆՏԽՈՐՀԻ ՍԻՍՏԵՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Ժողովագործի ֆինանսական բաժնի պետ

Հայկական ՍՍՌ 1958 թվականի Պետական բյուջեով շահույթներից բյուջեին հատկացվող մասնահանումների ամբողջ գումարի ավելի քան 56 տոկոսը նախատեսված է ստանալ ժողովնախորհի ձեռնարկություններից և կազմակերպություններից, մինչեւ 1957 թվականին նրանք կազմել են միայն 52 տոկոս։ Հաշվի առնելով ռեսապուրիկայի Պետական բյուջեի ընդհանուր աճը, կարելի է ասել, որ 1958 թվականին զգալիորեն կավելանան ժողովնախորհի սիստեմի ձեռնարկությունների շահույթներից բյուջեին հատկացվող մասնահանումների առնելով հատկակարգ կշիռն ու բացարձակական գումարը:

Խիստ զգալի է նաև ժողովնախորհի ձեռնարկություններից ռեսապուրիկայի բյուջեին հատկացվող շրջանառության հարկի մուծումների տեսակարար կշիռը, որը 1957 թվականին կազմել է եկամուտների այդ տեսակի մուծումների ընդհանուր գումարի 26,3 տոկոսը։ 1958 թվականին այդպիսի մուծումները կազմեն մոտ 31 տոկոս, շնչարգած շրջանառության հարկի այն մասը, որն առաջանում է Հայկական ՍՍՌ ժողովնախորհի ձեռնարկություններում, բայց իրավունք և մնում է մյուս միութենական ռեսապուրիկաներամ (օրինակ՝ գինու, օղու, կոնյակի) և արտահանվող այլ ապրանքների գծով։

Ժողովնախորհի սիստեմում ստեղծվող եկամուտների զգալի մասը ծախսվում է ընդհայնված

սոցիալիստական վերարտադրության վրա՝ կապիտալ ներդրումների ձևով և շրջանառության միջոցների ամի վրա։ Բավական է ասել, որ 1957 թվականին ժողովնախորհի կապիտալ ներդրումների 593,4 մլն. ռուբլու ընդհանուր գումարից, այդ թվում սեփական աղբյուրների հաշվին, ներդրվել է 306,5 մլն. ռուբլի կամ մոտ 52 տոկոս, իսկ 1958 թվականին այդ գումարը կհասնի մոտ 752,6 մլն. ռուբլու։ Սեփական ներդրումները կկազմեն ծավալի կեսից ավելին և հավասար կլինեն 383,2 մլն. ռուբլու։

Թերված տվյալները խոսում են այն հսկայական դերի մասին, որ խաղում են ժողովնախորհի սիստեմի եկամուտները ռեսապուրիկայի Պետական բյուջեի և ժողովրդական տնտեսության պլանի կատարման գործում։

Եթե հաշվի առնենք, որ այդ եկամուտները մորիկացվում են ժողովնախորհի ձեռնարկությունների և կազմակերպությունների ֆինանսական պլանների միջոցով, ապա պարզ կդառնա, որ ռեսապուրիկայի արդյունաբերության առքենական բնույթի կատարումը կախված կլինի ժողովնախորհի սիստեմի և նրա ձեռնարկությունների ֆինանսական աշխատանքի կազմակերպումից։

Զնայած ժողովնախորհի ձեռնարկությունների ֆինանսական աշխատանքի ճիշտ դրվագի հսկայական նշանակությանը, նա ամենևին էլ չի

բավարարում առաջադրվող պահանջներին: Այսպես, Ժողովական ժեղաքայի գործութեան ու մեկում ֆինանսական բաժին չկա: Մի քանի խոշորագույն ձեռնարկությունների հաստիքներում (Կանագ, Երևանի ավտոգովերի գործարան, Կիրովի անվան գործարան և այլն) նախատեսված են ֆինանսախատներ, բայց նրանք նույնպես մտնում են հաշվապահության կազմի մեջ: Ձեռնարկությունների մեծ մասում ֆինանսախատներ բոլորովին չկան և ֆինանսական աշխատանքը տարվում է նրանց հաշվապահական ապարատի միջոցով: Պատահական չէ, որ այդ պայմաններում ձեռնարկությունների ֆինանսական աշխատանքը հանգում է միայն բեռնված արտադրանքի համար բանկին հաշիվներ ներկայացնելուն, հաշվարկային և այլ վարկեր ստանալուն, վերադաս կազմակերպություններին զանազան տեղեկանքներ տալուն:

Ծատ ձեռնարկություններում ֆինանսական պլանների կազմումը կենտրոնացված է պլանային բաժիններում, իսկ մյուսներում՝ հաշվապահություններում: Դրանով էլ հիմնականում սահմանափակվում է ժողովականորդի ձեռնարկությունների ֆինանսական աշխատանքը:

Իսկ ինչո՞ւ է թերագնահատվում ֆինանսական այդպիսի կարուր նշանակություն ունեցող աշխատանքը ժողովականորդի ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների հիմնական մասի կողմից: Դա բացատրվում է այն սխալ պրակտիկայով, որ անցյալում կիրառել են միութենական և մի քանի ուսապուրիկական մինիստրություններ, որոնք ձեռնարկություններին ֆինանսական պահանքներ էին հիգնում և տըրեստներում ու գլխավոր վարչություններում կենտրոնացնում ֆինանսական և պլանավորող օրգանների հետ եղած բոլոր գործառնությունները: Այդպիսի կարգո խախտում է սոցիալիստական պլանավորման սկզբանքները, որոնք նախատեսում են ձեռնարկությունների կողեկանիների ակտիվ մասնակցությունը առաջդրաֆինանսական պահաններ կազմելու գործին:

Այդ վնասակար պրակտիկայի դրսևորումներից մեկը հանդիսանում է շահճություններից բյուջեին հատկացվող մասնահանումների հաշվարկների կենտրոնացնումը ժողովականորդի մի շաբթ վարչություններում: Հաշվարկների կենտրոնացնումը

իշեցնում է ձեռնարկությունների պատասխանառվությունը՝ բյուջեի հանդեպ եղած պարտավորությունները կատարելու համար և չի խթանում ֆինանսական օրգանների անմիջական կազմը ձեռնարկությունների հետ:

Ճիշտ է, արդյունաբերության կառավարման վերակառուցման և Հայկական տնտեսական վարչական շրջանի ժողովականորդի կազմակերպման հետ փոխվել են նաև այն պահանջները, որոնք ներկայացվում են ձեռնարկություններին՝ ֆինանսական աշխատանքի բնագավառում: Սակայն առայժմ դրանք հանգեցվել են այն բանին, որ ձեռնարկություններն իրենք են կազմել 1958 թվականի հոկտեմբերը և կատարել նրանց հետագա ճշտումը 1957 թվականի տարեկան հաշվետվյան տվյալների և այն ուղղակի հաշվարկների հիման վրա, որոնք հիմնված են պլանի ժամանակակից համար կազմակերպությունների վրա:

Բավարարվել դրանով, կնշանակել ձեռնարկություններում ֆինանսական աշխատանքը հանգեցնել միայն ֆինանսների պլանավորման հարցերին, այսինքն՝ գրաժարվել ձեռնարկությունների ֆինանսական աշխատանքի բոլոր մնացած կողմերից, որոնք պետք է դրականապես աղդեն նրանց ֆինանսների վրա, վերջիններս ամրապնդեն և դարձնեն տնտեսական հաշվարկի ամրապնդման և շահճության բարություններու համար:

Ձեռնարկություններում նյութական և աշխատանքային ծախսումների տնտեսման, քանակական և որակական ցուցանիշների կատարման ու գերակատարման, աշխատողների համար նյութական խթանների ստեղծման գործում մեծ նշանակություն ունի ներգործարանային տնտեչաշվարկի կազմակերպումը: Սակայն պետք է ասել, որ այդ հարցին շատ քիչ տեղերում է ուշադրություն դարձվում և, մեր կարծիքով, դրա պատճեաց ֆինանսական ապարատի բացակայությունն է:

Ձեռնարկությունների մեծ մասի սեփական շրջանառու միջոցների նորմատիվները նախատեսվել են, եթերով նրանց գործունեության սկզբանական շրջանի համար բնորոշ պայմաններից: Մեզ մոտ տարեցտարի կատարելագործվում է արտադրության տեխնոլոգիան, արմատավորվում է նոր, ավելի կատարյալ տեխնիկա, փոխալում է մատա-

կարարների և գնորդների աշխարհագությունը և այլն, բայց սեփական շրջանառու միջոցների կարիք հաշվելիս հիմնականում կրկնվում է անցյալում հաստատված միջոցների շրջապատճեց, արտահայտված օրերով, և կատարվում է նորմատիվի մեխանիկական աճեցումը՝ արտադրանքի թողարկման ժամանակակից աշխատավայրում:

Ինում են, իհարկե, դեպքեր, երբ ավելի երկարատև տեխնոլոգիական պրոցես ունեցող ապրանքների արմատավորման շնորհիվ, ծագում է անավարտ արտադրության համար սահմանված նորմատիվի վերանայման և ավելացման անհրաժեշտությունը: Իսկ այդ աշխատանքը պետք է կատարվի ձեռնարկությունների փինանսական ապարատի միջոցով, մի ապարատ, որը կամ բոլորովին բացակայում է, կամ պատշաճ բարձրության վրա չի գտնվում:

Վերջապես, թիվ կարևոր նշանակություն չունի ոչ պիտանի կամ ավելորդ նյութական արժեքներում շրջանառու միջոցների սառեցման կանխումը: Վերջին հաշվետվությունների տվյալներով նորմավորվող ակտիվների գերնորմատիվային մնացորդները ժողովների սիստեմով հասնա՞լ են 110 միլիոն ռուբլու, որոնց կազմում, հիմնականում, գնում են հումքը, օժանդակ նյութերը և մյուս արտադրական պաշարները: Դրանց գույքի մասը ենթակա է իրացման, մնացած՝ դուրս գրման:

Նորմավորվող ակտիվների դրության սիստեմակի ուսումնասիրությունը, ավելորդ պաշարների ստեղծման կանխումը, շրջանառու միջոցների իմուրիլիկացիայի թուլ շտալ հանդիսանում են ձեռնարկության փինանսական ապարատի կարեռագում խնդիրները:

Փինանսական աշխատանքի պատասխանատու տեղամասը, որ ապահովում է բյուջեի կարևորագույն եկամտային աղբյուրների կատարումը, նույնպես հանդիսանում է շահույթների պլանի կատարման սիստեմատիկ վերլուծումը և վերջինների ուղղումը ձեռնարկության փինանսական պլանով նախատեսված նպատակի համար:

Այդ բոլոր հարցերը կարող են հաջողությամբ լուծվել միայն որակյալ ֆինանսական ապարատի առկայության դեպքում, որից, դժբախտաբար, գույքի է ժողովների սիրությունը ձեռնարկություն-

ների գերակշռող մեծամասնությունը:

Դժվար է պատկերացնել մի ձեռնարկություն, որը կառավարման ապարատի կազմում չընանալի բաժին, աշխատանքի և աշխատավարձի բաժին, գլխավոր մեխանիկի և էներգետիկի բաժին և այլն, որոնք կոմպլեկտավորված չեն ներածությունը, կրթությունը ունեցող աշխատողներուն:

Դժվար է նույնպես պատկերացնել մի ձեռնարկություն, առանց ֆինանսական բաժնի, սակայն իրականում վերջինների փինանսները վերապատճենվել են մասնագիտական կրթությունից զորկ, հաշվապահության կազմի մեջ մտնող աշխատողներին:

Խոսելով ձեռնարկությունների ֆինանսական աշխատանքի մասին, չի կարելի մի քանի խոսք շասել նաև այդ աշխատանքի դրության մասին ժողովներին ճյուղային վարչություններում:

Կարելի է ասել, որ այսուեղ էլ զրությունը լավ չէ: Ֆինանսական բաժիններ ունեն միայն Սննդի և Թեթև արդյունաբերության վարչությունները՝ 2—3 միավորների կազմով, իսկ մնացած բոլոր վարչությունները՝ մեկական ֆինանսիսու, որոնք 9 վարչություններում, մտնում են պլանային բաժինների կազմի մեջ և 2 վարչություններում հաշվապահության կազմի մեջ:

Այդ դրությունը հանգնում է այն բանին, որ վարչությունները չեն ապահովում ֆինանսական պլանների և վարկային հայտերի ժամանակին ու որակական կազմումը, սիստեմատիկությունը չեն վերլուծում՝ ձեռնարկությունների փինանսաւոնտեսական գործունեությունը, չեն վերահսկում և չեն զեկավարում նրանց փինանսական աշխատանքը:

Ժողովների առջև ժառացած խնդիրները համառորեն պահանջում են փինանսական աշխատանքն արագործեն վերակառուցել ձեռնարկություններում և ճյուղային վարչություններում, նրանցում ստեղծել որակյալ աշխատողներով կոմպլեկտավորված լիարժեք ֆինանսական ապարատ:

Խմբագրության կողմից. Կ. Փարսադանյանի հոգվածը հրապարակվում է քննարկման կարգով: Խմբագրությունը խնդրում է ընթերցողներին՝ հայտնել իրենց կարծիքները և դիտողությունները: